ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2011 թվականի նոյեմբերի 15-ին

ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 26. Դոնորին տրվող արտոնությունները

1. Դոնորի բժշկական հետազոտումը արյունատվությունից առաջ իրականացվում է անվճար: Արյունատվությունից հետո պահանջի դեպքում նրան տրվում է արյունատվությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը:

2. Կենսաբանական և էներգետիկ կարողությունների վերականգնման նպատակով լիազոր մարմնի սահմանած կարգով արյան դոնորներին արյունատվությունից առաջ և հետո պարտադիր տրամադրվում է սնունդ, իսկ փոխհատուցվող արյան դոնորներին՝ համապատասխանաբար նաև դրամական փոխհատուցում:

2. 1 Դոնորը, առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած բոնուսների կիրառման կարգին համապատասխան, իրավունք ունի ստանալ ապահովագրավճարի բոնուսներ: Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում սահմանած բոնուսների կիրառման համար հիմք հանդիսացող արյան դոնորության իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

3. Օրենքով կարող են սահմանվել դոնորին տրվող այլ արտոնություններ:

Հոդված 32. Արյան ազգային ծառայությունը
(վերնագիրը խմբ. 21.03.18 ՀՕ-160-Ն)

1. Արյան ազգային ծառայությունը ներառում է՝

1) արյան դոնորություն իրականացնող կազմակերպությունները.

2) փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունները.

3) արյան պատրաստուկների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները:

2. Արյան ազգային ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններն իրականացնում են՝

1) արյան պետական պաշարների ստեղծում, պահպանում և նորացում՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի և բժշկական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա ~~պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման նպատակով կնքված պայմանագրերի հիման վրա.~~

2) արյան ռեեստրում տվյալների մուտքագրում՝ էլեկտրոնային եղանակով.

3) անհատույց կամավոր դոնորության քարոզչության միջոցառումների իրականացում:

3. Արյան ազգային ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններում անհատույց, կամավոր հիմունքներով դոնորության հիման վրա հավաքված արյան բաղադրամասերը ներառվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերի հիման վրա ստեղծվող արյան պետական պաշարների մեջ: Սույն դրույթը չի տարածվում որևէ կոնկրետ ռեցիպիենտի համար մեկ այլ անձի կողմից իրականացվող անհատույց, կամավոր հիմունքներով դոնորության դեպքերի վրա: